ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

Ք.Գավառ 15.01.2020թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից,<<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>>ՊՈԱԿ-ի դեմս տնօրենի ժ/պ Բ. Հովեյանի, որը ղեկավարվում է ըստ իր կանոնադրությամբ , այսուհետ կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2019թ.դեկտեմբերի 19-ի N1877-Ն որոշմամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը՝Գեղարքունիքի երկրագիտական թանգարանը Պատվիրատուի կողմից հատկացված ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին տրվող /բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Սուբսիդիաներ ՊՈԱԿ-ներին,, հոդվածով 20593.2 հազ. ՀՀ դրամ / գումարը հատկացնել սույն պահանջ կատարողին/:

1.1. Վերը նշված որոշմամբ նախատեսված ,, Ընթացիկ սուբսիդիաներ ,, հոդվածով ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1877-Ն որոշումով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին նախատեսված ,,ՀՀ պետական բյուջեի 08.02.02.02,, ծրագրով հոդվածային վերաբաշխում կատարելու մասին հավելվածի հիմքով:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է Գեղարքունիքի երկլագիտական թանգարանին՝ թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ կազմակերպելու համար, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. Հաշվետվությունը

2.1. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

3. Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2020 թ. դեկտեմբերի 25-ը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ֆորս-մաժոր/

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,

պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

Ք. Գավառ
ՀՎՀՀ 08404767
ՀՀ 900171078505
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար՝
----------Ս.Խլղաթյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Կատարող
Գեղարքունիքի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ
ՀՎՀՀ 08400689
Գանձապետական հ/հ 900178000148

Տնօրենի ժ/պ ----------Բ. Հովեյան
/ստորագրություն/

Կ.Տ.

,,Գեղարքունիքի երկրագիտական թանգարան" ՊՈԱԿ-ին 2020թ. տրամադրվելիք

գումարներն ըստ ամսական բացվածքի

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կազմակերպում

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	1966.4
3	Մարտ	3932.8
4	Ապրիլ	5625.1
5	Մայիս	7317.3
6	Հունիս	9009.6
7	Հուլիս	10701.9
8	Օգոստոս	12394.2
9	Սեպտեմբեր	14086.5
10	Հոկտեմբեր	16255.4
11	Նոյեմբեր	18424.3
12	Դեկտեմբեր	20593.2

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՀՀ ՖՆ Գործառն. վարչ.

ՀՎՀՀ 08404767 ՀՀ 900171078505

Գլխավոր քարտուղար՝

Ա.Իսրայելյան

Կ ա տ ա ր ո ղ

Գեղարքունիքի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ

ՀՎՀՀ 08400689

Գանձապետական հ/հ 900178000148

Տնօրենի Ժ/ա՝

Ք. Հովեյան